

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«29» ԱՊՐԻԼԻ 2014 Թ. N 36-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին N 1917-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի գ) ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի օգնական Հայկ Վլադիմիրի Սարգսյանին 2014 թվականի ապրիլի 30-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

Հիմք՝ Հ. Սարգսյանի անձնական դիմումը:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

Նախարարի պաշտոնակատար՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ